


# ԹԱՐԳԱԹԱՆՈՒԹԻՒՆ

զօրութեան, և յատկութեան Թըրեայ-քին[1] Անտրօմաքին Հնոյ, ժառանգի Յօ-հաննիսի մկրտչի Սիրվերինեանի որ բաղադրի, և տրամաբաշխի ի սպիցիա-րիին[2] Թէօթաօրին, առ կարմունջ ռի-ալթին ի վէնէտիկ։

ՈՐ կոչի ի մէջ այլ զօրու-թեանն որ ունի այս Թը-րեաքըն և է առաւել որ այսու ներքոյ գրեալ է։

Նախ առողջուցանէ ի մա-հու և կու պահէ խիթեալ[3] ցաւէ ևս մարդն ուրախ կու պահէ մինչեւ ի վերջը։

կու փախուցանէ ի մարդու փորի ամե-նայն զէճցաւէ[4] ազատէ և կու առողջացու-ցանէ ամենայն հիւանդութեանն ի մարմնէ և ի նեղութեանն որ ունենայ։

Այլ և պահէ և կու առողջացուցանէ մէկ մարդ մի որ ուձն[5] խայթէ և կարիճն խայթէ կամ թէ կատղած շուն խածնէ և այլ ուրիշ կատաղեալ անասուն՝ պիտոյէ որ խմիլ կամ թէ խոցի վերայ դնիլ առողջա-[նան]։

Այլ ևս կու առողջացուցանէ ամենայն ինենտին[6] հիւանդութեանն այլ մէկ մարդմի բարակեալցաւ[7] հանդիպի և սոյնպէս բո-վանդակ ցաւէն ազատի։

Այլ ևս կու առողջացուցանէ ամենայն ջերմութեանն և առաւել հինցաւէ[8] և մա-հայկան[9] և առաւել շնորհալի է ըստամուքի ցաւէ։

Այլ ևս կու առողջացուցանէ ամենայն ի փուրոյ ցաւէ կու ազատի ամենայն ցիղ ցաւէ։

Մէկ մարդ մի որ գուլնճի[10] հանդիպի և ի մէջքի ցաւէ այլ կու առողջացուցանէ և դեղնէցալ ցաւէ[11]։

Ջրգողութիւն որ է և սախութիւնն[12] և ի սրտէն կու հանէ ի փտեալ արեուն[13] և կու առողջացուցանէ այլ ևս արեուն թքելէ[14] բազում անգամ խմէլով կու առողջան[ան]։

Այլ և կու բազմացուցանէ աչքին լոյսն ևս ամենայն ի ներսին գլխուն հիւանդու-թեանն կու ազատի սապզար[15] լինի և կամ թէ կաթիլ[16] լինի կամ թէ խոստուկ[17] ունէ-նայ և կամ թէ հանապազ ձգըուտէ[18] կամ թէ թուլութիւնն ունէնայի չնցիղ յցաւ[19] որ լինի ազատի։

Թէ որ մէկ մարդու մի որ խուլ[20] բռնէ ևս կու առողջացուցանէ կու ուրախացուցանէ հանապազ կատարելապէս կամ թէ ի սրտի հիւան[դ]ութիւնն որ ունի որպէս է հազալ և կամ թէ տուզլի պալզամ[21] որ ունէնայ և չափէն դուրսն պնտացնէ մարդուն սիրտն ևս կու առողջացուցանէ ի սրտի դողէն[22] և կամ թէ որ կողացաւութիւնն որ ունի կամ թէ զարկըվի հանկարծակի ազատի և առողջանայ։

Այլ ևս կու հանէ ի մարդուն փորէն ճի-ճին և կու ըսպանէ և պանտ կանէ որ ոչ ծննանի ազատի ամենայն ցիխ ցաւէ թէ բոր և քուր ունենէյայ ազատի։